ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА

CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76

ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76

76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

Հեռ. (+374 10) 20-94-02

№ 943
«02» 09 2024

«Շող Ար» ՍՊԸ-ի տնօրեն

Կարեն Պողոսյանին

**Ծանուցում**

Հարգելի՛ պարոն Պողոսյան,

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Շող Ար» ՍՊԸ-ի միջև 01.08.2024թ կնքվել է ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/79-6 ծածկագրով շինանյութի մատակարարման պայմանագիր:

Հիմք ընդունելով «Շող Ար» ՍՊԸ-ի 29.08.2024 թվականի գրությունը /կցվում է/, ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.11 կետով, այն է "*Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը,պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:*"

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն լուծում է ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/79-6 ծածկագրով պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը. . .*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570060023050100 հաշվեհամարին վճարել ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/79-6 ծածկագրով պայմանագրի 16-րդ չափաբաժնի

որակավորման ապահովման՝ 22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 15000 /տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Շող Ար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Կատարող՝ Ա. Խաչատրյան*
*Գնումների բաժնի ղեկավար*
*Հեռ. /010/ 20 50 50 /102/*

Հ. Ա. Քամալյանի
անվան մանկավարժական
պարտեզի պետական ՊՈԱԿ-ի
տնօրեն Գ. Մանուկյանին

Հարգելի պարոն Մանուկյան ես Կարեն Սամվելի Պողոսյանս հանդիսանալով Շող Ար ՍՊԸ-ի տնօրեն հայտնում եմ Ձեզ այն մասին որ 01.08.2024թ ՊԻԿ4-5ԿԴԿՊ2Ֆ-24/79 ծածկագրով աճուրդին մասնակցել և հաղթող եմ ճանաչվել 16 և 27 չափաբաժիններով, սակայն իմ կողմից եղել է սխալ ընկալում N 16 չափաբաժնի հետ կապված այն է, որ էլեկտրական ավտոմատներ՝ ժողովածուի մեջ նշված է եղել ծավալային էլ. ավտոմատ, սակայն իմ կողմից հասկացվել է որ մեկ հատ ավտոմատ, դրա համար այն չենք կարող մատակարարել և այդ պատճառով ես Շող Ար ՍՊԸ-ի տնօրեն Կ. Պողոսյանս պատրաստ եմ վճարել տուժանքները (150.000դր × 15%) 22500 (քսան երկու հազար հինգ հարյուր դրամ) և պայմանագրի ապահովումը (150.000 × 10%) 15000դր (տասնհինգ հազար դրամ), ընդհանուր գումարը 37500դր (երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամ):

«ՇՈՂ ԱՐ» «ШОХ АР» «SHOGH AR» 02289417

Շող Ար ՍՊԸ
տնօրեն Կարեն Պողոսյան

29.08.2024թ [signature]